

Գիտությունը հանուն գիտության...

Մերն առ գիտությունն և կրթությունն, ասում են, մեր արյան մեջ է, այն գեներով է հասնում մեր սերունդներին: Եվ բնավ պատահական չէր, որ փոքրիկ Հայաստանն իր երեք միլիոնանոց բնակչությամբ շոշափելի ներդրում ուներ խորհրդային հզոր երկրի գիտության զարգացման գործում: Այստեղ էին ձևավորվում այնպիսի գիտական կենտրոններ, հիմնվում գիտատար ձեռնարկություններ, որոնք, մեղմ ասած, կարող էին և շարժել առավել մեծ հանրապետությունների խանդը:

Խորհրդային ժամանակներում գիտության մեջ ներգրավված մարդկանց թիվը մեր երկրում հասնում էր 28 հազարի: Այսօր ըստ գիտության պետական կոմիտեի տվյալների մինչև 7,5 հազար գիտնականներ են, որ ֆինանսավորվում են պետության կողմից:

Ըստ այն ցուցանիշների, որ մեր գիտնականների մի սովոր հատված ստանում է միջազգային գիտական դրամաշնորհներ և աշխատում համապատասխան կառույցների հետ, թույլ է տալիս եզրակացնել, որ մենք ունենք գիտության հզոր ներուժ նաև այսօր: Օրինակ՝ Միջազգային գիտատեխնիկական կենտրոնից, որին անդամակցում են նաև այնպիսի երկրներ, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Կանադան, Ճապոնիան, Եվրամիության երկրները, Հարավային Կորեան, Իսրայելը, ստացած գիտական դրամաշնորհների չափաբաժնով ԱՊՀ տարածքում Հայաստանը երկրորդն է: Իսկ մեկ միլիոն բնակչությանն ընկնող դրամաշնորհների քանակով՝ առաջինը:

Այս պարագայում բնականաբար ծագում է կարևորագույն հարցը. բավականին բարձր ներուժ ունեցող մեր գիտությունը որքանո՞վ է ծառայում երկրին: Մենք կարողանո՞ւմ ենք այն դարձնել շոգեքարշ, որն իր հետևից տանում է երկրի տնտեսությունը: Կամ, որն ավելի հստակ է՝ կարողանո՞ւմ ենք նրա արդյունքները կիրառելի դարձնել մեր տնտեսության տարբեր ոլորտների զարգացման համար: Հակառակ պարագայում դուրս է գալիս, որ մենք ունենք աշխարհում մրցունակ գիտնականներ, բայց... գիտություն՝ ոչ: (Կամ չգիտեմ, թե այս պարագայում առավել ճշգրիտ ձևակերպումը որը կլինի: Համենայն դեպս դրանից խնդրի էությունը չի փոխվում):

Եթե գումար դնես

Որպեսզի գիտությունը ծառայի երկրին, նույնն է թե՛ ապահովի տնտեսության տարբեր ոլորտների զարգացումը, պետք է գումարներ ներդնել նրանում: Ցավոք, մեր երկրում դա չի արվում, կամ՝ համարյա չի արվում:

Անգամ գիտության ֆինանսավորումն է տարօրինակ կերպով կատարվում: Ահա արդեն քանի տարի է, ինչ իրականացվում է թեմատիկ ֆինանսավորում, երբ արդյունքները կարող են և ոչ ոքի պետք չգալ, չօգտագործվել որևէ տեղ: Առաջին հայացաքից ծագում է պարտադիր հարցը, ինչի՞ համար է այսկերպ ստեղծվող գիտության նպատակը, որն է տրամաբանությունը. ստեղծվում է գիտություն գիտության համար: Մա՛ իմիջիպալոց:

Իսկ այժմ՝ հիմնականի մասին. գիտության մեջ ներդրված միջոցները անմիջապես իրենց արդյունքը երևան չեն բերում: Ընդունված է ասել, որ սովորաբար հիմնարար գիտությունների մեջ ներդրված գումարները փոխհատուցվում են 10-15 տարի հետո, իսկ կիրառական գիտության մեջ ներդրվածները՝ 3-5 տարի հետո: Նշանակում է՝ նախևառաջ պետք է իրականացվի հստակ քաղաքականություն, ներդրումներն իրականացվեն հատուկ ռազմավարության շրջանակներում, երբ արդյունքը պատրաստ էս ստանալ որոշակի ժամանակ անց:

Բիզնեսը չի օգտագործում

Մեր երկրում ավելանում է մեկ այլ խնդիր ևս, որն առավել մշուշոտ է դարձնում ոլորտի ապագան՝ համառորեն չեն ձևավորվում վենչուրային՝ ռիսկային հիմնադրամները: Տարիներ շարունակ խոսում ենք դրանց անհրաժեշտությունից, բայց այդպես էլ չկան ու չեն ստեղծվում: Ինչո՞ւ: Բանն այն է, որ մեր բիզնեսն այսօր այնքան զարգացած չէ, որ կարողանա ռիսկն ամբողջությամբ վերցնել իր վրա և սեփական գումարները ներդնել ինովացիոն ծրագրերում: Քանզի գիտության ոլորտում ներդրված ոչ

բոլոր միջոցներն են փոխհատուցվում: Նույնիսկ խոսում են այն մասին, որ փոխհատուցում լինում է սովորաբար հինգից մեկի դեպքում:

Այդ իսկ պատճառով մեր գործարարն այսօր վախվորած է և գիտության մեջ գումար ներդնելու ռիսկի տակ չի մտնում: Հասկապես առկա է մեկ այլ խնդիր ևս, որն առավել է ամրապնդում նրա մտավախությունը: Մեր գիտական նյութատեխնիկական բազան այս տարիների ընթացքում մաշվել ու մաշվել է, շարքից դուրս են եկել անհրաժեշտ տեխնոլոգիաները: Ավելին՝ տեղի է ունեցել հսկայական արտահոսք. տաղանդավոր շատ գիտնականներ պարզապես հեռացել են երկրից:

Այս պարագայում է, որ սեփական երկրում գիտության զարգացմանը և իր իսկ գործարարին պետք է ձեռք մեկնի կառավարությունը: Համագործակցության գոնե առաջին փուլում նրանց միջև դառնա կամուրջ, որպեսզի վերջիններս միմյանց հետ հարաբերվելիս զգան պետության ապահով ներկայությունը: Եթե պետությունը նախ ինքը ձևավորի այդ հիմնադրամները, ռիսկի հիմնական բեռը վերցնի իր վրա, աստիճանաբար համապատասխան քայլերի կմոլի նաև գործարարներին: Վերջիններս տեղեկանալով, որ պետությունը, ենթարկելով համապատասխան փորձաքննության, գումարներ է ներդնում տվյալ գիտական նախագծերի մեջ, վստահություն ձեռք կբերեն և իրենք ևս սեփական գումարներ կուղղեն այնտեղ:

Հենց թեկուզ՝ Ռուսաստանի Դաշնությունում կան պետական հիմնադրամներ, որտեղ վենչուրային կապիտալի բաժինը հասնում է մինչև 0,5 միլիարդ դոլարի: Սա այնքանով է լուրջ թիվ, որ պետության քայլին կհետևի նաև տնտեսության մասնավոր հատվածը. գործարարները ևս ներդրումներ կկատարեն գիտական նախագծերում: Այսինքն՝ պետությունն ինքն է առաջին ռիսկային քայլն անում, և դրանով դրդում, որ նույնը կատարի նաև մասնավոր բիզնեսը: Եթե այսօր մեր երկրում այս քայլերը չեն կատարվում, նշանակում է, ոչ միայն համապատասխան ֆինանսական ներարկումներ չեն արվում գիտության մեջ, այլև՝ ամենակարևորը՝ խզվում է գիտության և արտադրության կապը: Կամ որ նույնն է՝ գիտությունը երկրում չի գտնում իր կիրառական նշանակությունը:

Հեռուն չգնանք՝ փաստն այքներիս առջև է. անգամ այնպիսի գիտատար ձեռնարկությունների առկայության պայմաններում, ինչպիսիք Նաիրիտը կամ Վանաձորի քիմկոմբինատն են, արդեն խոսում են մեր երկրում քիմիայի, որպես գիտության մահամերձ լինելու մասին: Իսկ Հայաստանը նախկին խորհրդային ժամանակներում իրավամբ Մեծ քիմիայի երկիր էր:

Ո՞վ կճարի...

Այնուամենայնիվ մեր երկրում գիտնականներն աշխատում են: Հետևաբար ստոծվում են նաև գիտական արդյունքներ: Իսկ ինչպե՞ս են դրանք օգտագործվում: Մասնավորապես՝ գյուտերը, նորարարական առաջարկությունները: Վաղուց հայտնի է, որ մեր երկրում վերջիններս չնչին չափով են կիրառություն գտնում: Կամ մնում են թղթապանակների մեջ, կամ էլ կոպեկներով վաճառվում երկրից դուրս: Բնականաբար տուժում է և հեղինակ-գիտնականը, և պետությունն ինքը: Առավել՝ պետությունը: Որովհետև վերջինիս ֆինանսավորմանը են իրականացվում համապատասխան գիտական աշխատանքները:

Մեր երկրում դեռևս չկան մշակված խաղի կանոններ, որպեսզի ինովացիոն ծրագրերին, առևտրայնացման ենթակա նախագծերին հետագա ընթացք տրվի: Ընդհանրապես թերի է գիտության մասին օրենքը և այսօր հնարավորություն չունի պաշտպանել հեղինակային իրավունքը: Եվ ամենակարևորը՝ չի տալիս այն հարցի պատասխանը, թե ինչպե՞ս կարելի է միջազգային արտոնագրման հարցը լուծել: Բանն այն է, որ այն արժե 3540 հազար դոլար: Մեր գիտնականը բնականաբար այդպիսի միջոցներ չունի: Իսկ պետությունն էլ այդ նպատակի համար գումարներ չի հատկացնում: Ի՞նչ անել: Ասեմ, որ ներկայումս հեղինակային իրավունքի պաշտպանության, արտոնագրման խնդիրները դրված են էկոնոմիկայի նախարարության վրա: Սակայն... բյուջեից գումարներ չեն տրվում: Իսկ եթե գումարներ չկան, ուրեմն՝ ոչինչ էլ չի արվում:

Գիտության պետական կոմիտեն նախատեսում է հանդես գալ Գիտության մասին ՀՀ օրենքի մեջ փոփոխություններ մտցնելու առաջարկով, որպեսզի միջազգային արտոնագրման գործը պետությունն իր վրա վերցնի՝ վենչուրային հիմնադրամների միջոցով, և ռեալ աշխատանք կատարվի: Տեսնենք...

Հեղինակ՝ Գոհար ՍԱԲՆԱՆՅԱՆ